***

Այնտեղ, զայրացած երկընքի վերայ, բոցավառ կայծակ
Եւ խրլացուցիչ, ահեղ որոտներ—
Այստեղ, նորա տակ, անհոգ բազմութեան քրքջիչ ու կատակ,
Արհամարհական, լրկտի լիշոցներ։
Այստեղ, զայրացած իմ սրտում, հոգւոց, բասրանք-կրշտամբանք
Եւ եղբայրական սիրոյ քարոզներ—
Իմ շուրջը՝ մեղսոտ, սրբապիղծ մարդկանց ծաղրանք-հայհոյանք,
Դատապարտելի, ինքնագոհ ձայներ։
Ձայթիր, ով երկինք, դու օրհասական ահեղ ճայթիւնով—
Աշխարհ զարհուրած լծող ծունը իջնէ.
Ձայթիր, ով իմ սիրտ, մարգարէական կարող գոչիւնով—
Թող դող ըզգացած աշխարհ ըսթափուէ,
Աստծուն լիշէ։

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ.

Մոսկուա. 1889 Թ. մարտի 21.